ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԿՅԱՆՔ

ՀԱՅ ԿՅԱՆՔԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՋ

Եգիպտահայը զբաղեցնող խնդիրը այս պահուս և բավական ժամանակներե ի վեր Հայաստան ներգաղթն է։ Տենդագին կպատրաստվին արձանագրվողները, կպատրաստվին անհատապես, կպատրաստվին հավաքականապես։ Անհատապես իրը ընտանիք, գնելով այն ամենը, ինչ որ միասին պիտի տարվի, հագուստեղեն, տնային իրեր և այլն. և հավաքականապես՝ կազմած արտելներ, ինչպես ոսկերիչները, զինկոկրաֆները, շապիկագործները և այլն։ Եվ ինչքան կմոտենա գարունը, երբ պետք է սկսվի եգիպտահայոց ներգաղթը ըստ պաշտոնական հայտարարության, այնքան կավելնա ոգևորությունը։ Անցյալներ կըսվեր թե տեղվույս Սընկերի մեծ վաճառատունը մեջ կարի մեքենա չէ մնացած այլևս։

Եգիպտահայոց թիվը կհասնի շուրջ 27,000-ի։ Մերայինները, առհասարակ, հոս կզբաղին արհեստներով, թեև կան ճարտարարուեստականներ ալ։ Եգիպտոսի մեջ դրեթե հայոց ձեռքն է ոսկերչությունը, զինկոկրաֆի արհեստը, կոշկակարությունը, շապիկագործությունը, լուսանկարչությունը։ Մեր ազգակիցները այնքան հաջողակ են այս արհեստներուն մեջ և այնքան կարևոր տեղ՝ մը կգրավեն եգիպտական հրապարակին վրա, որ մոտիկ ապագային մեջ անոնց խմբական մեկնումը մտահոգության մատնած է տեղացիները։ Արաբերեն կարևոր թերթ մը, քանի մը օր առաջ, հարց կբարձրացներ, թե ի՞նչ կխորհի կառավարությունը այս մեկնումներեն հետո առաջ գալիք բացը գոցելու մասին (խոսքը մանավանդ ոսկերիչներու մասին էր) ու կավելացներ թե վերստին պիտի չտեսնե՞նք այն նեղությունները, զորս ունեցանք, երբ օսմանյան սուլթանները գրավելե հետո Եգիպտոսը՝ Պոլիս գաղթեցուցին մեր արհեստավորները։

Շուրջ 27,000 հոգի հաշուող եգիպտահայության վրա ցարդ արձանագրված են ավելի քան 12,000 հոգի։ Ենթադրելով, որ այս թիվը կրնա դեռ բարձրանալ, կարելի է եզրակացնել թե 1947-ի շրջանին Հայաստան պիտի մեկնի մեր գաղութին կեսը։

Ամենեն լավատեսներն անգամ նախապես չէին ակնկալեր թե այսքան մեծ համեմատություն մը կըրնա ստանալ հայրենադարձը, տրված բլլալով որ մեր գաղութն առհասարակ բարեկեցիկ է, հաստատուն գործի և,—խոսելով շատերու մասին—տունի ու տեղի տեր։ Փաստը նկավ ցույց տվավ, որ դեռ շատ է այս գաղութին մեջ թիվը անոնց, որ հայրենիք կուզեն վերադառնալ ոչ թե անոր համար, որ ապրուստի նեղություն ունին հոս, այլ անոր համար, որ ատիկա պարտականություն կնկատեն։ Այսպես է որ արձանագրվածներու մեջ կարևոր թիվ մը կկազմեն նաև հարուստները։

Ըստ գաղափարական պատկանելիության, արձանագրվածները ջախջախիչ մեծամասնությամբ շեզոք հայրենասերներ են. հետո կուգան Ռ. Ազատականներն ու հնչակյանները։ Շատ քիչ է թիվը հոմեադավաններուն, իսկ ավելի քիչ որոշ քլիքի մարդոց։

Այս վերջիններու համար շար բերանները կըսեն թե ակնկառույց կսպասեն իրենց հակառակորդներուն մեկնումին, որպեսզի հանգիստ սրտով կարողանան տեղավորվիլ առաջնորդարաններուն մեջ ու տիրանալով աթոռի և տնտեսական միջոցներու (որովհետև մեր զույգ առաջնորդարանները բավական հարուստ են) իրենց անհայրենիք պետության հին երազը իրականացնեն ու Հայաստանի դեմ ճակատ հարդարեն։ Եվ ասիկա կրնա շահաբեր գործ մը նկատվիլ, քանի որ ատոր

համար վճարողներ կան ու միշտ կրնան գտնվիլ։

Եվ արդարև, ի՞նչ պիտի ըլլա, այս մեկնումներեն հետո արտասահման մնալու դատապարտված ազգային հարստությունը, որ պատկառելի գումարներու կհասնի։

***

Նոյեմբերի 29-ի տոնը, այս տարի հոս և մերձակա գաղութներու մեջ բացառիկ շուքով մը տոնվեցավ։ Եկեղեցիները իրենց պարտականությունը կատարեցին ու սրահները իրենցը։ Խանդավառության, կարգապահության ու պատշաճության մեջ։ Եվ այս տարվան այս բացառիկ խանդավառությունը հասկանալի էր։ Սգավոր էին միայն որոշ տիպի մարդիկ։ Տեղվույն դաշնակցական թերթը՝ «Հուսաբեր», որ դաշնակցական ճանճի բզզոցն անգամ չի մոռանար արձանագրելու և անկե հսկա հետևություններ հանելու, սիրտ շունեցավ երկու տողով իսկ անդրադառնալու բազմությունները հուզող այս տոնակատարությանց և օրվան նշանակության։ Ինչու՞ արդյոք այս մոռացումը կամ ուրացումը, իրենք որ հայրենիքի համար միշտ հոգի կուտան եղեր...

Բայց անարդար կըլլար մտածել թե անոնք բան մը չեն ըներ հայրենիքին համար։ Զայնը կուգա Հալեպեն, ուր քանի մը ամիս առաջ փորձեցին դաշունահարել Ռ. Ազատական մտավորական երիտասարդ մը, իսկ քանի մը օր առաջ ալ հարձակում գործած տեղվույն «Եփրատ» թերթի խմբագիր ընկեր Մարտիրոս Տեր-Ստեփանյանի վրա, ծանրապես վիրավորելով զայն գլուխեն, թևեն ու ձեռքեն։ Պատճա՞ռը։ Կկարծե՞ք թե հայրենիքի կամ հայրենասիրության դեմ շարժած էր իր գրիչը մեր կորովի ընկերը։ Կամ կկարծեք թե Դրոյի համհարզներեն էր մեր այս տարեց, հավատավոր, մտավորական ընկերը։

Ահա թե մարդիկ ինչպես կմասնակցին հայրենիքի օգտին։ Անմիտներ, որ կկարծեն թե կարելի է դաշունահարել կամ գանգատել գաղափարը, հայրենասիրությունը կամ համոզումը։ Դաշնակցականները կհիշե՞ն արդյոք թե բռնական այս միջոցները երբեմն կիրցած են լռեցնել Ռ. Ազատական մը։ Կամ չե՞ն հիշեր թե Ռ. Ազատականները հինեն ի վեր վարժ են սանձելու անսանձները... Բայց այս բաներո՞վ պիտի զբաղեինք պատմական այս օրերու մեջ։

ԴԻՏՈՂ

(«Պայքար», թիվ 1561)

ՄԱՐՍԵԼԱՀԱՅ ԿՅԱՆՔ

«Հրաբեր»-ի թղթակիցը հաղորդում է.—

Ներգաղթը դեպի Սովետական Հայաստան անսահման ոգևորություն և խանդավառություն ստեղծեց մեր գաղութին մեջ։ Ոչ միայն քաղաքին, այլ և արվարձաններուն և մոտակա քաղաքներուն մեջ մեծ թափով հառաջ կտարվին ներգաղթի արձանագրությունները։ Պարզ բանվորներեն զատ արձանագրված են արհեստավորներ, մանր առևտրականներ և ծանոթ գործարանատերեր, որոնք 10, 20, 30 բանվորներ կաշխատցընեն։ Անոնք կերթան Սովետական Հայաստան գիտակցորեն համոզված և ինքնավստահ, կերթան մայր հայրենիք, ի սպաս դնելու համար իրենց փորձառությունները և դրամը, խառնելու համար իրենց աշխատանքի քրտինքը Հայաստանի վերելքին և ճարտարարվեստի զարգացման։

Արձանագրվողներու մեջ այնքի կզարնվին կոշկակարներ, դերձակներ, ֆյուսներ և ատաղձագործներ, որոնք Մարսելյի մեջ դրված են փայլուն դիրքեր։

Որքան հուզիչ, նույնքան և սրտապնդիչ է տիրող մթնոլորտը։ Բոլո՞ր, բոլո՞ր անհուն խանդով և ցնծությամբ լեցված՝ անհամբեր կսպասեն ներգաղթին դեպի Սովետական Ազատ Հայաստան։

Դարերե ի վեր ստրուկ եղող հայը հպարտ է այսօր, հպարտ իր Հայաստանով, իր կառավարությունով և իր Կարմիր Բանակով։ Այլևս ի սպառ ջնջված է իր անբասիր ճակտի վրայեն «հայ մաթլոսա» մակդիրը. սալ արմենիեն (աղտոտ հայ) չուզեր հորջորջվիլ, չուզեր նախատվիլ տեղացիներեն։ Հայը Հայրենիք ունի, ՀՂՈՐ ԵՎ ԱՆԿԱԽ, որ թևերը լայն բացած կսպասե իրեն։

Այս է տիրող պատկերը Մարսելյի մեջ և այսպես պիտի շարունակվի վաղը անպայման։

Նույնպես մեծ է նաև ստեղծված խանդավառությունը ներգաղթի ֆոնտի շուրջը։ Դեռ նոր սկսված հանգանակությունը միայն խոնարհ խալերու և մանր առևտրականներու միջև արդեն հասած է նախանձելի գումարի մը՝ 300,000 ֆրանքի։

Չկա հայ մը, բացի դաշնակ դավադիրներեն, որ իր սրտաբուխ նվերն ուրախությամբ չբերե ազգահավաքի ֆոնտին։ Կճանաչեմ բանվորներ, որոնք 5-6 զավակներու հայրեր են և տարիներե ի վեր ծանր պայ-

մաններու տակ կապրին, իրենց շաբաթականը ամբողջականությամբ նվիրած են ներգաղթի ֆոնտին։ Բայց կան նաև մարդիկ, հոգիով աղքատներ, ինչպես նաև ազգուրացներ, որոնք քար անտարբերությամբ կդիտեն աղգահավաքի այս մեծ գործը։

Դաշնակ խմբակը սիստեմատիկ կերպով ամենաաղտոտ և զզվելի պայքար կտանի ներգաղթին դեմ։ Ձեք գտներ ծանոթ թե շաբաթային դաշնակցական մը, որ մաս կազմե ներգաղթին և կամ քաջալերե ներգաղթի ֆոնտը։ Անոնք, զարշելի բանսարկությամբ մը, տունե տուն, խանութե խանութ և փողոցե փողոց ման կուգան, սուտերով և զրպարտություններով կշանան մոլորեցնել միամիտ և սակայն պատվական հայերը, նույնիսկ ամուսինը կնոջմեն, զավակը հորմեն զատելու շափ առաջ կերթան...։

Փաստերը պերճախոս են և անհերքելի։

ԼՈՒՐԵՐ ԳԱՀԻՐԵԵՆ

Նվագածուներու արտելը.— Ավելի քան 16 ներգաղթող հայ արվեստագետ-նվագողներ իրենց արտելը արդեն կազմած են և կըպատրաստվին նվագահանդես մըն ալ տալու։

Ոսկերիչներու արտելը.— Ներգաղթող ավելի քան հարյուր ոսկերիչ վարպետներ միանալով կազմած են իրենց արտելը։

Մեքենագետներ.— Կան բազմաթիվ մեքենագետ, ձուլիչ, խարտիչ, երկաթագործ կամ պղնձի վրա գործող ներգաղթող վարպետներ և մասնագետներ, որոնք կպատրաստվին կազմակերպել նաև իրենց սեփական արտելը։

Ուսուցիչներ և աշակերտություն.— Կըսվի թե արձանագրվող ուսուցիչներու և աշակերտներու թիվը այն աստիճան մեծ է, որ 1947-են հետո Գալուստյանի Պուլագի շենքը անօգուտ պիտի դառնա և գաղութը պիտի գոհանա Շուպրայի վարժարանով։

Ա. ՇԱՀՃԱՆ

(«Լրաբեր» թիվ 80)

ՆԱՄԱԿ ԿԱԼԿԱԹԱՅԻՑ

(Քաղված մի մասնավոր նամակից, որը սա ացվել է Թեհրանում 1947 թ. հունվարի 5-ին)

18 հոկտ. 1946 թ.

Սիրելի բարեկամ

Հարցրել էիք Հնդկաստանի վիճակի և հայերի մասին։ Պատասխանն անբավարար է և մտահոգիչ։

Նախ թուցիկ կերպով ասեմ հնդկահայերի մասին։ Իհարկե դուք մեր պատմության ծանոթ եք և քաջատեղյակ հին հնդկահայոց պատմության։ Դրանք արդեն պատմության են անցել։ Երբեմնի մեծատուն, բարեկեցիկ ու պալատների տեր համբավավոր հայերը չկան այլևս։ Ջանազան քաղաքներում, այս և այն հայտնի փողոցների վրա ձեզ ցույց կտան այս ու այն ապարանքը կամ մեծ վաճառատունը, որ երբեմն հայերին են պատկանելիս եղել և ձեզ կմնա խորը հառաչով անցնել դրանց մոտով։ Անգամ Կալկաթան զուրկ է իր երբեմնի մեծահարուստ և կարկառուն դեմքերից։ Գիտեք արդեն որ Թեհրանի Դավթյան դպրոցի հիմնադիր և բարեբար Դ. Դավթյանը չկա վաղուց։ Անդին մընում են 1-2 հոգի նշանավոր հայեր միայն։

Ջավան, որ մեծահարուստ հայեր ուներ, ճապոնական նվաճումից կամ սպանվեցին, կամ անհետ կորան և կամ փախչելով Ռանգուն՝ ընկան ճապոնացիների վատթար բռնության ներքո։ Ճապոնացիներն ամուսիններին բաժանել էին կանանցից և նրանց պահում էին տարբեր քեմպերում։ Ամեն առավոտ շատ շուտ մարդ ու կին պիտի զարթնեին և լծվեին ստոր աշխատանքների և բոլորն էլ պիտի մինչև գետին կռանային, երբ թեկուզ մի ճապոնացի հասարակ զինվոր գար նրանց մոտ։ Այդ ստոր աշխատանքներում և վատ սննդառության հետևանքով մերոնցից շատերը մահացան։ Եթե դաշնակիցների հաղթանակը չլիներ, ոչ մի հայ այլևս մնացած չէր լինի։ Այսքանից ձեզ համար պարզ պետք է լինի, որ Սուրաբայում ևս մատների վրա համրվող հայեր հազիվ են մնացել։

Ոչ Կալկաթայում և ոչ այլ քաղաքներում չկան այլևս երբեմնի այն կրեսոս հայերը, որ Ջուղային այնքան նպաստ կհասցնեին կամ հովուական այցելության եկող թեմական սրբազաններին կընդունեին առոք փառոք։

Հնդկաստանը նման է եռացող կաթսայի։ Երկրի բոլոր կողմերում խռովություններ, ցույցեր են ու գործադուլներ։ Երբեմնի հլու հպատակ հնդիկները անկախության հաղ-

թաձայն պահանջներ են անում։ Լոնդոնից բանակցության համար եկած նախարարների և երկրից Լոնդոն հրավիրված ներկայացուցիչների խորհրդակցությունները արդյունք չտվին։ Հնդիկները վճռականապես կանգնել են կատարյալ անկախության պահանջի վրա, գուցե և շահեն այդ, եթե չլինեին ներքին անհամաձայնություններ։

Հնդիկները պնդում են զուտ Հնդուստանի անկախության վրա։ Մուսուլմանները պաշտպանում են իրենց ուրույն Փաքիստանի անկախությունը, իսկ սիխերը Սիխստանի առանձին պահանջով են հանդես գալիս։

Համաձայնություն չեղավ։ Եվ ահա օգոստոսի 16-ից պայթեց հնդուսների և մուսուլմանների միջև մի զարհուրելի կռիվ ու ջարդ։ Զարհուրելի էր ջարդն ու կռիվը կալկաթայում։ Ամբողջ 4 օր ու գիշեր կոտորեցին, այրեցին և թալանեցին իրարու։

Կարելի է ասել սա երկրի ընդհանուր վիճակն է։ Ժողովուրդը մշտագրգիռ դրության մեջ է։ Ի՞նչ կլինի եթե վաղը մի ընդհանուր ճակատ կազմեն օտարների դեմ, որոնց սոսկալի դեմ են։ Երևակայիր, որ մեզ ևս տիրողներին խառնելով սպառնում են։ Հնդկաստանն այլևս հայերիս տեղը չէ։ Փրկությունն արդեն սկսված ներգաղթի մեջ է։ Ասիան զարթնել է։ Յուրաքանչյուր ազգ ուզում է իր երկրի և իր ճակատագրի տերը լինել և օտարին խորթ աչքով է նայում։ Ըստ այսմ էլ մեր փրկությունը մեր երկրում լինելու և մեր ճակատագրի տերը լինելու մեջն է։ Այսպես պիտի մտածի ամեն հայ մարդ։

(«Վերածնունդ» փետրվար 21, 1947 թ.)

ՇՔԵՂ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

«Պայքար»-ը հաղորդում է.—

Հայկական Սովետական Հանրապետության 26-րդ պանծալի տարեդարձին առիթով, դեկտ. 10, երեկոյան փառավոր ընդունելություն մը տեղի ունեցավ Նյու-Յորքի Սովետական հյուպատոսարանի ընդարձակ շենքին մեջ, հարյուրավոր հայրենասեր ժպտադեմ հայերու ներկայությամբ։

Ընդունելությունը սարքած էին, ի պատիվ հայ գաղութին, Սովետական Սոցիալիստական Հանրապետություններու Միության Նյու-Յորքի ընդհանուր հյուպատոս Յակով Մ. Լոմակին և Մ. Ա-ի Ընդհանուր Ժողովի Սովետ Պատվիրակության անդամ Համազասպ Հարությունյան, որոնք ժպտերես և ուրախ տրամադրություններով կընդունեին տոնակատարության եկող հյուրերը։

Պետք է ըսել թե ընդունելության ներկա էին Նյու-Յորքի հայ ընտրանին և զանազան հայ կազմակերպություններու ներկայացուցիչները։

Ներկաներեն կարելի է հիշել Ամերիկահայոց Առաջնորդը, Հ. Բ. Ը. Միության նախագահ Արշակ Գարակեոզյան, մեկ միլիոն տոլար հանգանակության վարիչ Լևոն Կերտան, Ռամկավար Ազատական կուսակցության շրջանային վարչության կազմը գլխավորությամբ տոքտ. Հովհ. Տովիկյանի, «Պայքար»-ի, «Լրաբեր»-ի, «Երիտասարդ Հայաստան»-ի, «Հայաստանի կոչնակ»-ի և «Նոր դիր»-ի խմբագիրները։ Ներկա էին նաև Բարեգործական ծանոթ դեմքերեն վարիչ-պատվիրակ Վահան Մալեզյան, և Վահան Քյուրքճանը, Նյու-Յորքի հայ գաղութին քաջածանոթ դեմքերեն Տիգրան Խան Քելեկյան, Հայկ Գավուքճյան, Կեդր. Վարչության անդամներեն Տիգրան Սմսարյան և Ավետիս Կեոլճիքյան, Ազգային Խորհրդի ատենապետ Պետրոս Թերզյան և տոքտ. Բնակունի, բանաստեղծ Կ. Սիտալ, որ նոր վերադարձած էր Սովետական Հայաստանի գրողներու Բ համագումարեն այնքան խանդավառված, գրագիտուհի տիկին Զարուհի Գալեմքիարյան, բանաստեղծ Հակոբ Անտոնյան և Հակոբ Ասատուրյան, տաղանդավոր արվեստագետներ Սոս և Զավեն Մելիք եղբայրները և իրենց հայրը, Մելիքզադե, Խորեն Հարությունյան և բազմաթիվ ուրիշներ։

Գեղարվեստական հայտագրին ինքաբերաբար մասնակցեցին երգչուհի օր. Էլիզ Գապուլյան, օր. Նորա Գազանճյան, դաշնակի ընկերակցությամբ օր. Մարո Մանուկյանի։ Պ. Մաղալյան գեղեցիկ շունչով երգեց Հայաստանյան երգեր, արժանանալով ներկաներու գնահատության։

Մ. Ա.-ի Ընդհանուր Ժողովին Սովետական Պատվիրակության անդամ Համազասպ Հարությունյան ընդունելության ամբողջ ընթացքին ժողովուրդին մեջ կշրջեր և ժպտադեմ կխոսեր անոնց հետ, իր ներկայությամբ անոնց հայրենաբաղձության կարոտը մեղմելով։

Սովետական Հայաստանի 26-րդ ամյակին առիթով տրված այս փառավոր ընդունելությունը հավետ հիշատակելի դեպք մը պիտի մնա ներկա հայրենասեր հայերու մտքին մեջ։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 26-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՊԵՐՃԱՇՈՒՔ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

«Արևմուտք»-ը հաղորդում է.—

Փարիզի ամենեն շքեղ սրահներեն Բալե տը Շայոյի մեջ, բազմահազար ժողովրդի ներկայությամբ տոնվեցավ խորհրդային Հայաստանի 26-րդ տարեդարձը։

Անհուն հրճվանքով պետք է արձանագրել ժողովրդական լայն և միահամուռ մասնակցությունը։

Բեմին ճակատը կերևային երկու վերտառություններ.— «Կեցցե՛ հաղթապանծ Ս. Ս. Ռ. Միությունը» և «Հայ ժողովուրդը իր պատմական հայրենիքը կպահանջե»:

Բեմին վրա բազմած էին խորհրդային Միության դեսպան Ն. Վ. Պոկոմոլով, Արտավազդ Արքեպիսկոպոս՝ լիազոր պատվիրակ Եվրոպայի Թեմին, օրվա նախագահ Մեթր Մարմարյան, զանազան միությանց ներկայացուցիչներ, որոնք մաս կկազմեին օրվա նախագահության։

Մեթր Մարմարյանի բացման և շնորհակալության խոսքերեն հետո առաջին խոսքը տրվեցավ Ն. Վ. Պոկոմոլովին, որ ռուսերեն գեղեցիկ ճառ մը արտասանեց, շնորհավորելով Հայաստանի խորհրդայնացման 26-րդ տարեդարձը և մանավորապես շեշտեց խորհրդային Միության մեջ փոքր ազգերու վայելած բարիքներն ու ինքնօրենությունը։

Ապա խոսք առավ Պ. Մեսրոպ Ասատուրյան և խոսեցավ մանավորապես մեր հայրենիքի տնտեսական, մշակութային վերելքի մասին։

Կաթողիկոսական պատվիրակ Արտավազդ Արքեպիսկոպոս շատ գեղեցիկ և իմաստալից խոսքերով շնորհավորելով օրվան տոնը, մանավորապես ծանրացավ Հայ Եկեղեցվո կատարած դերին, տարիներ շարունակ, և նաև վերջին պատերազմի ընթացքին։

Պ. Հինայեկյան և պրոֆ. Մանուելյան, առաջինը հայերեն, երկրորդը ֆրանսերեն նույնպես շեշտեցին օրվան տոնին կարևորությունը, և խանդավառ խոսքերով կոչ ուղղեցին հանդիսականներուն համախմբվիլ մեր հայրենիքին շուրջ։

Ամենեն վերջը ցուցադրվեցավ «Հայրենի երկիր» շարժանկարը։ Գեղեցիկ գործ մը, պատկերացում մը Հայոց պատմության, իր լայն գծերուն մեջ, հայրենաշունչ ու ոգևորիչ։ Ընդհանուր տպավորությունը ոգևորիչ է ու կխոսի բոլորիս ալ սրտին։ Այդ տպավորությամբ ալ արդեն հանդիսականները բաժնվեցան սրահեն։

ԼԵՎՈՆ Զ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Սիրելի գրական ընկերներ և հայրենակիցներ

Արտասահմանի հայ գրողի մը համար Հայաստանի Սովետական Գրողներու Միության կողմե Երևանի մեջ տեղի ունեցող իր Համագումարին մասնակցելու հրավեր մը մեծ պատիվ մըն է և ես խոնարհաբար շնորհակալ եմ Ձեզի, որ զիս արժանի նկատեցիք այդ պատիվին։ Խորապես հուզվեցա, երբ ստացա Ձեր հեռագիրը։ Հուսացի գալ, բայց չեմ կրնար, հակառակ բոլոր ջանքերուս և բաղձանքիս։ Դյուրին չէ ներկա ժամանակներուն ճամբորդել Կալիֆորնիայեն Հայաստան։ Շատ կցավիմ, որ պիտի չկրնամ Ձեզի հետ ըլլալ Հայաստանի Սովետական Գրողներու և իրենց հյուրերուն այս պատմական Համագումարին առթիվ, և իմ աչքերով տեսնելու Հայաստանի առաջդիմության սքանչելի և խանդավառիչ տեսարանը, և մեր ժողովուրդին կուլտուրական և գրական վերածնունդը Ձեր առաջնորդության տակ։

Կցավիմ նաև որ պիտի չկրնամ բաժակ մը հայկական գինի բարձրացնել և Ձեզի հետ խմել Սովետ Միության անդամ եղող Հայաստանի քույր հանրապետությանց կենացը, և մանավանդ անոնց բոլորի մայրն հանդիսացող Ռուսաստանի կենացը։ Ռուս փառապանծ ժողովուրդին հանդեպ, որուն գրական ներկայացուցիչները կմասնակցին կարծեմ Ձեր Համագումարին, բոլոր Հայերու պես ես ալ ունիմ սիրո, զմայլանքի և երախտագիտության զգացումներ։ Ինչպես հազարավոր հայ որբ տղաք, ես ալ իմ կյանքս կպարտիմ Ռուս Բանակին։ Հարյուր հազարավոր հայ մանուկներ, որոնք ինծի հետ քշվեցան մահուան ճանապարհին վրա, ջարդուեցան Թուրքերու մորակներու, սուրերու և կա-